Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Ստեփանյան, հեռ. 380-227

035/31152-11
18.10.2011թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Օդորակիչների տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - ծրագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ ծրագրի բարեգործ է հանդիսանում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, մինչդեռ ծրագրի 4-րդ կետի համաձայն՝ ծրագրի կատարող է հանդիսանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: | Դիտողությունը անհիմն է: |

15/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 15/5

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ԱԱ/3-4/ 7312-11
14.10.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.10.2011թ. թիվ 15/15.8/16579-11 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Օդորակիչների տեղադրման» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/30824-11
14.10.2011թ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

______ հոկտեմբերի 2011 թվականի N Մ - -Ա 15/6
քաղ. Երևան

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՆԻՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N 3/3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի –ի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի -ի N 3-4/-11 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 47367700դրամ արժողությամբ «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտալան Թրեյդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 01555508) 2011 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման աշխատանքների իրականացում՝ 47367700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության

15/6

բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«10» 10 2011 թ.

Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման

ԾՐԱԳԻՐ

15/6

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերակառուցել Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքը և քարե ծածկասալերը ծածկել պղնձե թիթեղով՝ անձրևաջրերի ներթափանցումը կանխելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լոռու մարզ, ք. Վանաձոր, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 47 367 700 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձորի քրիստոնյա համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հոկտեմբերի 2011թ. – 28 փետրվարի 2012թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգում 47 367 700 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Արտալան Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Մ.Բաղրամյան 24/բ,, ՀՎՀՀ 01555508), պայմանագիր թիվ 20Շ/011՝ կնքված 26.09.2011թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է նորոգել Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքը և լանջերը պղնձե թիթեղով ծածկել, որի մակերեսը մոտ 500 քմ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Լոռու մարզի մարզպետարանի և Վանաձոր քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն՝
Մարինե Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

15/6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.10.2011թ № 3/3.8-1/85883-1

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.10.11թ. N 15/15.8/16580-11 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/20710-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ 15/6

№ 6549-11
18.10.2011թ.

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mourodian@justice.am

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 11-ի
15/15.8/16580-11 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման» ծրագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ ծրագրի բարեգործ է հանդիսանում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, մինչդեռ ծրագրի 4-րդ կետի համաձայն՝ ծրագրի կատարող է հանդիսանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այդ առումով առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

Հարգանքով՝ Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Ստեփանյան, հեռ. 380-227

035/31159-11
18.10.2011թ.

15/6

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - ծրագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ ծրագրի բարեգործ է հանդիսանում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, մինչդեռ ծրագրի 4-րդ կետի համաձայն՝ ծրագրի կատարող է հանդիսանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: | Դիտողությունը անհիմն է: |

15/6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

14.10.11թ N 01/13.2/5038-11

ՁերN------------առ--------------------------

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի հոկտեմբրի 11-ի N 15/15.8/16580-11 գրությամբ ներկայացված ««Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ.Վարդանյան

Ս.Սրապյան
52-09-43

027/30774-11
14.10.2011թ

15/6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

N: ԱԱ/3-4/7311-11
14.10.2011թ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.10.2011թ. թիվ 15/15.8/16580-11 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/30825-11
14.10.2011թ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

15/7

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՄՆ-Ի ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N 3/3.8-1/85301-11 և 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N 3/3.8-1/86012-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 4-ի N 6215-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 03/07-1/11366-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 3-ի N ԱԱ/3-4/7018-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) իրականացվող՝ 47500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



15/7

մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային
Հիմնադրամի նախագահի [illegible] կողմից
«27» սեպտեմբերի 2011թ.

Հետազոտական աշխատանքները ԱՄՆ–ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի անմիջական նպատակներն են աջակցել՝<br>–Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը,<br>–միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին,<br>–մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին,<br>–ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին,<br>–միջազգային չափորոշիչներին համապատասխանող քաղաքացիական բնույթի գիտական հետազոտությունների իրականացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել մաքսային և հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720 |
| | Ծրագիրն իրականացնողը | Ծրագիրը իրականացնում է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ), քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233 |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային կազմակերպություններում և առնչվում են գիտության և կրթության բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է **47500000** (քառասուն յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:<br>Ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720 Ծրագրի ընդհանուր ֆինանսական աջակցության ծավալները բաշխվելու են ըստ հետևյալ ուղղությունների՝<br>– ճանապարհորդական ծախսեր, ինչպես նաև ԱՄՆ–ում մինչև երեք ամիս շնորհառուների մնալու ծախսեր – 30400000 (երեսուն միլիոն չորս հարյուր հազար) դրամ, 2011 դեկտեմբերի 1–ից մինչև 2012թ հուլիսի 1–ը,<br>– անհատական ֆինանսական աջակցություն Հայաստանում աշխատանքը շարունակելու ժամանակ – 6840000 (վեց միլիոն ութ հարյուր քառասուն հազար) դրամ, 2012թ նոյեմբերի 1–ից մինչև 2013թ դեկտեմբերի 1–ը,<br>- սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում – 10260000 (տաս միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) դրամ, 2012թ նոյեմբերի 1–ից մինչև 2013թ դեկտեմբերի 1–ը, |
| | Բարեգործություն ստացողը | Նշված ծրագրով բարեգործություն ստացողներ են հանդիսանում՝<br>ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային բոլոր կազմակերպությունները, որոնց կողմից ներկայացված առաջարկությունները գիտական անկախ փորձաքննության արդյունքներով ֆինանսական աջակցության կերաշխավորվեն ծրագրին իրականացնողի կողմից: |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ներկայացվող ծրագրի տևողությունը կազմում է 24 ամիս, սկսած 2011թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նշված ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող միջոցառումները հանդիսանում են.<br>դրամաշնորհի ֆինանսական և նյութական միջոցների ստացումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին՝ **47500000** (քառասուն յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ, 2011թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 1-ը, այդ թվում ճանապարհորդական ծախսեր, ինչպես նաև ԱՄՆ-ում մինչև երեք ամիս շնորհառուների մնալու ծախսեր – **30400000 (երեսուն միլիոն չորս հարյուր հազար)** դրամ, 2011 դեկտեմբերի 1-ից մինչև 2012թ հուլիսի 1-ը, անհատական ֆինանսական աջակցության Հայաստանում աշխատանքը շարունակելու ժամանակ՝ **6840000** (**վեց միլիոն ութ հարյուր քառասուն հազար**) դրամ, 2012թ նոյեմբերի 1-ից մինչև 2013թ դեկտեմբերի 1-ը, սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում – **10260000** (**տաս միլիոն երկու հարյուր վաթսուն հազար**) դրամ, 2012թ նոյեմբերի 1-ից մինչև 2013թ դեկտեմբերի 1-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ինչպես Հանրապետության ներսում, այնպես էլ Հանրապետությունից դուրս) համակարգչային տեխնիկա և օժանդակ նյութեր, լաբորատոր սարքավորում և կահույք, գրենական պիտույքներ, ինչպես նաև տարբեր ծառայություններ՝ ընդամենը **10260000** (**տաս միլիոն երկու հարյուր վաթսուն հազար**) դրամի (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը, | Նշված ծրագիրը իրականացնելու նպատակով ԳԱՏԱՀ-ին կազմակերպչական ծախսեր չեն պահանջվում: |

15/7

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ «Բարեգործության մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա:<br>Միևնույն ժամանակ, ԳԱՏԱՀ-ի կողմից, սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Ծրագրի ղեկավար Հ.Կարապետյան

15/7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

15/7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.10.11թ. №3/3.8-1/86012

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.10.11թ. 91/10 գրության և հիրումն մեր 30.09.2011թ N 3/3.8-1/85301-11 գրության՝ կապված <<Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ>> կողմից իրականացվող ծրագրի լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

14.10.11թ.
№ 034/30780-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

15/7

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

4.10.11թ.
№ 6215-11

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 29-ի**
**15/15.6/15879-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227**

5.10.11թ.
№ 035/29749-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

15/7

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/11366-11 "6" հոկտեմբերի 2011

*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի սեպտեմբերի 29-ի № 15/15.6/15879-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

6.10.11թ.
№ 031/29967-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/7

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

3.10.11թ.
№ ՆՀՆ/3-4/7018-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.09.2011թ. թիվ 15/15.6/15879-11 գրությանը կից ներկայացված «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի շրջանակներում նախատեսվում է 10.260.000 դրամ արժեքով տեխնիկայի, նյութերի, սարքավորումների և այլ ծառայությունների ձեռք բերում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս: Քանի որ այդ գումարների մասով ակնկալվում է ստանալ հարկային և մաքսային արտոնություններ՝ անհրաժեշտ եմ համարում ծրագրի 10-րդ կետում առանձնացնել ՀՀ տարածքում ձեռք բերվող և ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների և ծառայությունների արժեքները:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

4.10.11թ.
№ 044/29600-11

ԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

NATIONAL FOUNDATION OF SCIENCE AND ADVANCED TECHNOLOGIES

0014, Երևան, Ազատության պող., 26, Հեռ.: 28-81-92, 28-84-68 ⊗ 26, Azatutyan Ave., 0014, Yerevan, Armenia,
Phones: (374-10) 28-81-92, 28-84-68 Fax: (374-10) 28-13-80; E-mail: info@nfsat.am; Internet: www.nfsat.am

N 92/10 «10» 10 2011

15/7

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
տեղակալ՝ պրն. Ա. Ալավերդյանին՝

Պատճենը՝

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Մ.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ալավերդյան,

Ի պատասխան Ձեր NԱԱ/3-4/7018-11 առ 03.10.11թ նամակի պարզաբանում ենք, որ. ներկա պահին հնարավոր չէ հստակ նշել, թե ինչ ապրանք է գնվելու ՀՀ-ան տարածքում, և ՀՀ-ից դուրս, քանի որ ծրագիրը դեռևս ակտիվացված չէ:

Միևնույն ժամանակ ուզում եմ նշել, որ համաձայն Որոշման նախագծի, ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացվելու են ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի քննարկմանը:

Հարգանքով,

ԳԱՏԱՀ-ի նախագահ՝ Հ.Կարապետյան

<< ... ՈՒԹՅԱՆ
Մուտք թիվ 094/30293
«18» 10 20 11թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ. Կից ներկայացված ծրագրի շրջանակներում նախատեսվում է 10.260.000 դրամ արժեքով տեխնիկայի, նյութերի, սարքավորումների և այլ ծառայությունների ձեռք բերում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս: Քանի որ այդ գումարների մասով ակնկալվում է ստանալ հարկային և մաքսային արտոնություններ՝ անհրաժեշտ եմ համարում ծրագրի 10-րդ կետում առանձնացնել ՀՀ տարածքում ձեռք բերվող և ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների և ծառայությունների արժեքները: | Հիմնադրամը 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 92/10 գրությամբ ներկայացրել է պարզաբանում: |

15/7

*<u>ՆԱԽԱԳԻԾ</u>*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** 15/8

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/84240-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 5597-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 1/06/801-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 6-ի N 01/13.2/4327-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6431-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի N 01/4207-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 1027600000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա»
իրավաբանական անձանց միության նախագահ
............ Ռ. Հայրապետյանի կողմից
«10» հոկտեմբերի 2011 թ.

«Գյումրու Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գյումրու «Մուշ-2» թաղամասի 10/5 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն-ՈՒԵՖԱ, (Շվեյցարիա, Ժնև), Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա-ՖԻՖԱ, (Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ ք. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Գյումրի քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1 027 600 հազ. դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ ք. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) (Գյումրիի «Մուշ-2» թաղամասի 10/5 հասցեում կառուցվող Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2011 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2014 թ. դեկտեմբեր 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 478 935 հազ. դրամ<br>2. Խաղադաշտերի կառուցում՝ 400 030 հազ. դրամ<br>3. Կահավորում՝ 23 855 հազ. դրամ:<br>4. Շինանյութի, ներքին հարդարման պարագաների և լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 124 780 հազ. դրամ<br>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի: |

15/8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

15/8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

07.09.2011թ. №3/3.8-1/84240-

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.09.11թ. N 15/15.6/14620-11 գրության՝ կապված «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ կից ներկայացված ծրագրի «9»-րդ կետի «6»-րդ ենթակետի համաձայն ներմուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 73.400հազ. դրամ, մինչդեռ «10»-րդ կետով՝ նախատեսվում է 185.335հազ դրամ ապրանքների ներմուծում: Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք կատարել ծրագրի համապատասխան փոփոխություն՝ համապատասխանեցնելով «9»-րդ և «10»-րդ կետերը, միաժամանակ հստակ տարանջատելով ծրագրի շրջանակներում ներմուծման համար անհրաժեշտ գումարը և ներմուծվող առանձին ապրանքների նախատեսվող գինը:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացնել ծրագրի իրականացման փուլերը ըստ եռամսակային բաշխվածության:

Հարգանքով

034/27245-11
07.09.2011թ

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մարզադպրոցի շենքի կառուցման նախագծի կազմում՝ 7 340 հազ. դրամ, գլխավոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 337 640 հազ. դրամ, կաթսայատան կառուցում՝ 14 680 հազ. դրամ, էլեկտրական սնուցման ենթակայանի կառուցում՝ 9 175 հազ. դրամ, ջրի ոռոգման ամբարի կառուցում՝ 27 525 հազ. դրամ, ցանկապատում, պարսպապատում՝ 45 875 հազ. դրամ, ոռոգման ավտոմատ համակարգերի կառուցում՝ 36 700 հազ. դրամ:<br>Նախատեսվում է կառուցել նաև 1 հատ արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 154 140 հազ. դրամ (որի համար ՖԻՖԱՆ տրամադրել է 420 հազար ԱՄՆ դոլար) և 3 հատ ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 245 890 հազ. դրամ:<br>Կահավորում 23 855 հազ. դրամ:<br>Լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 51 380 հազ. դրամ, շինանյութի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 73 400 հազ. դրամ:<br>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Գյումրու քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

15/8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

15/Բ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
էլ. փոստ՝ press@moj.am

N 01/5597-11
07.09.2011թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 1-ի**
**15/15.6/14620-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. Թովմասյան**

035/27232-11
07.09.2011թ.

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա.Ստեփանյան, հեռ.՝ 380-227**

---

15/Բ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
## ՆԱԽԱՐԱՐ

02 09 2011 թ. N 1/06/801-11

Ձեր 2011 թ. սեպտեմբերի 1-ի 15/15.6/14620-11 գրության

ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
հեռ.՝ 52-86-01
հեռապատճեն՝ 52-65-29, 52-88-77
էլ. փոստ՝ msy@msy.am

*Հայաստանի Հանրապետության*
*կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման*
*հանձնաժողովի նախագահ*
*Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

*Հարգանքով՝*

??????????????? *Ա. Պետրոսյան*

022/26794-11
02.09.2011թ.

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների
քաղաքականության վարչություն
Ս. Հարությունյան 52-99-79

15/8

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐ

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

06.09.2011թ. N 01/13.2/4327-11

Ձեր N-------------ու-----------------------------

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 15/15.6/14620-11 գրությամբ ներկայացված ««Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ.Վարդանյան

027/27111-11
06.09.2011թ.

Ե.Աթայան
52-46-80

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/8

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: [illegible]/3-4/6431-11
09.09.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.09.2011թ. թիվ 15/15.6/14620-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 4-րդ և 7-րդ կետերի միջև առկա է հակասություն, քանի որ միևնույն կազմակերպությունը ի դեմս «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության՝ չի կարող միաժամանակ հանդիսանալ բարեգործական ծրագրի կատարող և բարեգործություն ստացող: Հաշվի առնելով ծրագրի բյուջեի մեծությունը, և հարկային արտոնության ակնկալվող ծավալները՝ անհրաժեշտ է նշված ծրագիրը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետությունում բարեգործության ոլորտը կարգավորող օրենսդրությանը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/27504-11
09.09.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

15/8

« 02 » 09 2011թ.
N: 01/4207-11

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77


ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 01.09.2011թ.
թիվ՝ 15/15.6/14620-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

116/26870-11
02.09.2011թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
# FOOTBALL FEDERATION OF ARMENIA

10.10.2011թ.
Ֆ/1 122

15/8

ՀՀ Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պրն. Ս. Տեր- Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերցիա ԻԱՄ-ի կողմից իրականացվող «Գյումրու Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է զարգացնել ֆուտբոլային ենթակառուցվածքները Շիրակի մարզում, որոնք հնարավորություն կընձեռեն երիտասարդությանը զբաղվել ֆուտբոլով բարեկարգ պայմաններում:
Խնդրում ենք Ձեր միջնորդությունը ներկայացված ծրագիրը բարեգործական որակելու հարցում:

Հարգանքներով

Ռ. Հայրապետյան
ՀՖՖ Նախագահ

2062

ՀՀ ...
ԸՆԴ... 094/30294
Մուտք թիվ
«10» 10 2011թ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 0010, ԵՐԵՎԱՆ, ԽԱՆՋՅԱՆ 27
0010 KHANJYAN str. 27, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA
ՀԵՌԱԽՈՍ/PHONE: +374 10 54 88 85, ՖԱՔՍ/FAX: +374 10 54 71 73
e-mail: ffarm@arminco.com, URL: www.ffa.am

## ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ կից ներկայացված ծրագրի «9»-րդ կետի «6»-րդ ենթակետի համաձայն ներմուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 73.400հազ. դրամ, մինչդեռ «10»-րդ կետով՝ նախատեսվում է 185.335հազ դրամ ապրանքների ներմուծում: Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք կատարել ծրագրի համապատասխան փոփոխություն՝ համապատասխանացնելով «9»-րդ և «10»-րդ կետերը, միաժամանակ հստակ տարանջատելով ծրագրի շրջանակներում ներմուծման համար անհրաժեշտ գումարը և ներմուծվող առանձին ապրանքների նախատեսվող գինը:<br>Միաժամանակ առաջարկում ենք ներկայացնել ծրագրի իրականացման փուլերը ըստ եռամսակային բաշխվածության: | Կազմակերպությունը 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N Ֆ/1 122 գրությամբ ներկայացրել է լրամշակված տարբերակը: |

| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ | |
|---|---|
| «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.<br>Կից ներկայացված ծրագրի 4-րդ և 7-րդ կետերի միջև առկա է հակասություն, քանի որ միևնույն կազմակերպությունը ի դեմս «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության՝ չի կարող միաժամանակ հանդիսանալ բարեգործական ծրագրի կատարող և բարեգործություն ստացող: Հաշվի առնելով ծրագրի բյուջեի մեծությունը, և հարկային արտոնության ակնկալվող ծավալները՝ անհրաժեշտ է նշված ծրագիրը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետությունում բարեգործության ոլորտը կարգավորող օրենսդրությանը: | Կազմակերպությունը 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N Ֆ/1 122 գրությամբ ներկայացրել է լրամշակված տարբերակը: |

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

15/9

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն 2011 թվականի -ի N -11 , Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի -ի N ՖԲ/ԱնՄ-5/-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի 1-ի N ԱԱ/3-4/1-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3467027 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Երևան, Ուլնեցու 64, ՀՎՀՀ՝ 01009295)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Վահագն և Մերի» ՍՊԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 05204632) 2011 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինվերանորոգման աշխատանքների իրականացում՝ 346700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Մ.Անտոնյանի............ կողմից

10.նոյեմբերի 2011

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի կողմից 2011 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին իրականացվելիք սոցիալական

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անմիջական նպատակը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, վարքային և հոգեհուզական խնդիրներով, երեխաների համար «ճգնաժամի միջամտության» ծառայություններ մատուցող կենտրոնի մի քանի սենյակների վերանորոգում. |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայություններն առավել արդյունավետ և որակյալ դարձնելու նպատակով իրականացվող վերանորոգման ծրագրի համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում: |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ: |
| 4 | Ծրագրի կատարողը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ, հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլնեցու փողոց, թիվ 64, ՀՎՀՀ 01009295 |
| 6 | Ծրագրի բյուջեն | Վերանորոգման Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3 467 027 ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի շահառուները՝ բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ թափառաշրջիկ, աղքատ, անապահով, մուրացիկ, անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն և Կենտրոն են ուղղորդվում ՀՀ Ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժինների, համայնքային Խնամակալության հանձնաժողովների, պետական և հասարակական տարբեր ատյանների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն): |

15/9

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը և/ կամ սկիզբը, ավարտը | 10.10.2011թ. - 30.12.2011թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Վերանորոգման աշխատանքները կկազմակերպվեն «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի՝ հինգ տարածքներում՝ պահակատուն, հերթապահի սենյակ, ճաշարան, միջանցք և սանհանգույց: Մինչ բուն աշխատանքների սկիզբը հայտարարվել է վերանորոգման աշխատանքների կատարման մրցույթ, որին հայտ ներկայացրած կազմակերպություններից ընտրվել է «Վահագն և Մերի» ՍՊԸ-ն: Վերջինս, աշխատանքների ծավալի նախնական գնահատումից հետո ներկայացրել է վերանորոգման աշխատանքների Տեղային նախահաշիվ, ինչպես նաև ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից տրված Լիցենզիան: Համաձայն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, վերանորոգման աշխատանքները կսկսվեն հոկտեմբերի 10-ից, կիրականացվեն օբյեկտ առ օբյեկտ և կավարտվեն դեկտեմբերի 30-ին:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 3 467 027 ՀՀ դրամ:<br>Փոխադարձ պայմանավորվածությամբ, Ծրագրի արժեքի 50%-ը «Վահագն և Մերի» ՍՊԸ-ին կտրամադրվի որպես կանխավճար՝ աշխատանքները սկսելուց առաջ, իսկ մնացածը կփոխանցվի աշխատանքներն ավարտելուց և ընդունման-հանձնման ակտը հաստատելուց հետո:<br>Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 3 467 027 դրամի չափով՝ 2011թ. հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում, «Վահագն և Մերի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ - 05204632, հասցե՝ ք. Ապարան, Գ-այի փող. 3/18) և «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի (ՀՎՀՀ - 01009295, ք.Երևան, Ուլնեցու 64) միջև՝ 03.11.2011թ. կնքված Պայմանագրի համաձայն իրականացվող շին-վերանորոգման ծրագրի համար: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է շին-վերանորոգման աշխատանքներ իրականացնել «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի պահակատանը (պատերի և առաստաղի ներկում, հատակի երեսապատում կերամիկական սալիկներով), հերթապահի սենյակում (պատերի և առաստաղի ներկում, մանրահատակի լաքապատում, պատուհանի փեղկի վերանորոգում), ճաշարանում (պատերի և առաստաղի ներկում, պատուհանագոգերի փոխում և ներկում, պատուհանների ներկում, ջրագազամատակարարման համակարգի նորոգում), սանհանգույցում և կից միջանցքում (հին կերամիկական սալիկներով պատերի քանդում և նոր երեսպատում, պատուհանների և դռների փոխում, նոր՝ մետաղապլաստե դուռ-պատուհանի տեղադրում, պատերի և առաստաղի ներկում, ջրագազամատակարարման համակարգի նորոգում, նոր լվացարանի, զուգարանակոնքի տեղադրում, լողախցիկի պատրաստում, պատերի լամինացված սալիկներով երեսպատում): Նախատեսվող ծախսերի գինը՝<br>Նյութերի ձեռքբերում – 2 204 194 ՀՀ դրամ<br>Շին-վերանորոգման աշխատանքներ – 1 262 833 ՀՀ դրամ<br>Կից ներկայացնում ենք պայմանագրի լուսապատճենը |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | չկան |

15/9

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի հայաստանյան գրասենյակի և «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի, ինչպես նաև ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

15/9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/9

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.10.11 № 3/38-1/85887

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.10.11թ. N 15/15.1/16385-11 գրության՝ կապված <<Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի>> <<Երեխաների աջակցության կենտրոն>> հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/30494-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

15/9

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

01/6437-11
12.10.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 6-ի 15/15.1/16385-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. Թովմասյան**

035/30635-11

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա.Ստեփանյան, հեռ.՝ 380-227**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

15/9

« 10 » 10 2011 թ. N ՖԲ/ԿՀՄ-5/8143-11

Ձեր 2011-10-06, 15/15.1/16385-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

040/30309

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.56-34-91

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

15/9

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԱՀԲ-4/7237-11
11.10.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.10.2011թ. թիվ 15/15.1/16385-11 գրությանը կից ներկայացված «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

1. Կից ներկայացված ծրագրի 4-րդ կետի համաձայն ծրագիր իրականացնող է հանդիսանում «Վահագն և Մերի» ՍՊԸ-ն: Առևտրային կազմակերպության հանդես գալը որպես բարեգործական ծրագիր իրականացնող հակասում է «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

2. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգ»-ի 6-րդ կետի համաձայն՝ հարակից գործարքների կողմ պետք է հանդիսանա ծրագիր իրականացնող անձը: Կից ներկայացված շինվերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագրում որպես պատվիրատու կողմ է հանդես գալիս «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը, որը ըստ էության ծրագրի բարեգործություն ստացողն է:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված որոշման նախագծի ընդունումը գտնում եմ ոչ նպատակահարմար:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/30479-11

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
CHILDREN'S SUPPORT CENTER FOUNDATION

3750069, Կարապետ Ուլնեցի 64, Երևան
Հեռ: (374-10) 240160; 240150; 240121
Էլ. կայք` www.farusa.org/armenianchildren
Էլ. հասցե` farz@far.am

FAR FUND FOR ARMENIAN RELIEF

3750069, 64 Karapet Ulnetsi, Yerevan
Tel: (374-10) 240160; 240150; 240121
Website: www.farusa.org/armenianchildren
E-mail: farz@far.am

12.հոկտեմբերի, 2011թ.
N 108/11

15/9

ՀՀ Կառավարությանն առընթեր ՊԵԿ նախագահի տեղակալ
պարոն Ա.Ալավերդյանին
պատճենը` ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ալավերդյան,

Ի պատասխան Ձեր 11.10.2011թ. ԱԱ/3-4/7237-11 գրության, Ձեզ ենք ներկայացնում «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամում` 2011թ. հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 30-ը իրականացվող շինարարական ծրագրի լրամշակված տարբերակը:

Հարգանքով`
ԵԱԿՀ գործադիր տնօրեն Ա.Անտոնյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
034/30605
12 10 2011թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ամերիկայի հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 11.10.11, N ԱԱ/3-4/7237-11 | |
| 1. Կից ներկայացված ծրագրի 4-րդ կետի համաձայն ծրագիր իրականացնող է հանդիսանում «Վահագն և Մերի» ՍՊԸ-ն: Առևտրային կազմակերպության հանդես գալը որպես բարեգործական ծրագիր իրականացնող հակասում է «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին: | 1. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |
| 2. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգ»-ի 6-րդ կետի համաձայն` հարակից գործարքների կողմ պետք է հանդիսանա ծրագիր իրականացնող անձը: Կից ներկայացված շինվերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագրում որպես պատվիրատու կողմ է հանդես գալիս «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը, որը ըստ էության ծրագրի բարեգործություն ստացողն է: | 2. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

15/9

_ՆԱԽԱԳԻԾ_

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ սեպտեմբերի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

15/10

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՍԵՆՅԱԿԻ ԵՎ ԾԱԾԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N 3/3.8-1/85889-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 12–ի N 01/6440-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 01/13.2/4964-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11–ի N ՖԲ/ԱնՄ-5/8191-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ԱԱ/3-4/7236-11 և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 1/3/1-1/4711-11, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 2543000 դրամ ընդհանուր արժողությամբ «Նոր – Խարբերդում բնակելի սենյակի և ծածկի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՊՐՈՖՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2011 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված՝ N 190911 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կիսանկուղային հարկի վրա բնակելի սենյակի և ծածկի կառուցում՝ 2543000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝

մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



15/10

մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*Դիակոնիա բարեգործական հիմնադրամի*

*տնօրեն Բ. Զամբազյանի կողմից*

«13»-ը հոկտեմբերի ի 2011թ.

15/10

## «Նոր Խարբերդում բնակելի սենյակի և ծածկի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարեգործական / Նոր Խարբերդում բնակելի սենյակի և ծածկի կառուցում<br>Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9)<br>Հոլանդիայի «Մեննենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ, ՀՎՀՀ 00068196, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Նոր Խարբերդ 1-ին փող. թիվ 12 տուն<br>Սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն 2011-2014թթ. | 2543000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Հակոբյան Շուշիկ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ. սեպտեմբերի 19-ից մինչև 2011թ.-ի դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 19-ը սեպտեմբերի 2011թ. «Դիակոնիա» բ/հ-ի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է կապալի պայմանագիր (պայմանագրի գինը՝ 2543000 ՀՀ դրամ): Պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման ժամկետ է հանդիսանում 30-ը դեկտեմբերի 2011թ.:<br>Նախատեսվում է բնակելի սենյակի և ծածկի կառուցում |

15/10

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 19-ը սեպտեմբերի 2011թ. «Դիակոնիա» բ/հ-ի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է կապալի պայմանագիր, որի արժեքը կազմում է 2543000 ՀՀ դրամ:<br>Նոր Խարբերդ 1-ին փող. 12 հասցեում կիսանկուղային հարկի վրա 20 քառ/մ մակերեսով բնակելի սենյակի և 35 քառ/մ մակերեսով ծածկի կառուցման աշխատանքներ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | 1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի<br>2. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության<br>3. Երևանի քաղաքապետարանի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներակայացում Շվեյցարական «Դիակոնիա» միջազգային կազմակերպությանը, հոլանդական «Մեննենկինդերեն» բարեգործական հիմնադրամին<br>Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

15/10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

15/10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.10.11թ. № 3/3.8-1/85889-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.10.11թ. N 15/15.1/16456-11 գրության՝ կապված <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում բյուջեն անհրաժեշտ է ներկայացնել ըստ տարեկան կտրվածքի:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

12.10.11թ.
№ 034/30492-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

15/10

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ՝ press@moj.am

№ 01/6440-11
12.10.2011թ

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 7-ի**
**15/15.6/16456-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում» ծրագրի 1-ին և 7-րդ կետերի միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 1-ին կետի համաձայն ծրագրի նպատակն է ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների և սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգումն ու կառուցումը, մինչդեռ ծրագրի 7-րդ կետի համաձայն բարեգործության ստացող են հանդիսանում միայն սոցիալապես անապահով ընտանիքները: Ծրագրի 7-րդ և 8-րդ կետերի միջև ևս առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 7-րդ կետով ծրագրի իրականացման տևողությունը 2011 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ն է, մինչդեռ ծրագրի 9-րդ կետով աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանված 2011 թվականի դեկտեմբերի 30-ը:

035/30639-11
12.10.2011թ.

Այս կապակցությամբ առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները:

15/10

Հարգանքով՝ Հ. Թովմասյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա.Ստեփանյան, հեռ.՝ 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

15/10

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

11.10.11թ. N 01/13.2/49...

ՁերN--------------առ-------------------------

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N 15/15.6/16456-11 գրությամբ ներկայացված ««Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով Վ.Վարդանյան

12.10.11թ.

№ 027/30488-11

Ս.Սրապյան
52-09-43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

15/10

«11» հոկտեմբերի 2011 թ. N ՖԿ/ԱՀՀՐ-5/8191-1

Ձեր 2011-10-07, 15/15.6/16456-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

11.10.11 թ.
№ 040/30483-11

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.56-34-91
0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/10

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

11.10.11 թ.
№ ԱՀԻ/3-4/7236-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.10.2011թ. թիվ 15/15.6/16456-11 գրությանը կից ներկայացված «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ հայտնում եմ.

1. Քանի որ կից ներկայացված ծրագրի նպատակներն առնչվում են մի քանի ոլորտների (կրթական, առողջապահական, սոցիալական)՝ անհրաժեշտ եմ համարում ծրագրի 7-րդ կետում հստակեցնել շահառու հանդիսացող կազմակերպությունները և անապահով ընտանիքները:

2. Կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը սպառիչ չեն ներկայացված և հնարավոր չէ պատկերացում կազմել ծրագրի բյուջեի ծախսման վերաբերյալ: Ուստի անհրաժեշտ եմ համարում նշված կետերը ներկայացնել ծրագրով նախատեսված բյուջեի ամբողջ գումարի չափով՝ մանրամասն նշելով նախատեսվող ծրագրային միջոցառումները, դրանց ժամկետները և արժեքները, ինչպես նաև ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքները և ծառայությունները, դրանց ծավալները և գինը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում լրամշակել ներկայացված ծրագիրը: Ծրագրի բարեգործական որակման հարցը կարող է քննարկվել վերը նշված հարցերի հստակեցումից հետո:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

11.10.11 թ.
№ 044/3047

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

15/10

ք. Արտաշատ , Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

N 1/3/1-1/4711-11 „10" հոկտեմբերի 20 թ.

Ձեր թիվ15/15.6/16456-11
07.10.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Նախագահ պարոն՝ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ,,Դիակոնիա" բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<Հայաստանի հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների և սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում >> ծրագրի մասին'' հայտնվում է, որ առաջարկվում է ծրագիրը ճանաչել բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ.՝ Գ. Եղիազարյան
Հեռ. /0235/ 2-05-77

10.10.11թ.
№ 111/30338-11

---

ԴԻԱԿՈՆԻԱ

DIACONIA
CHARITABLE FUND

Բ/Ջ-79

15/10

«14» հոկտեմբերի 2011թ.

*ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն 07-ը հոկտեմբերի 2011թ. թիվ Բ/Ջ-75 նամակի, հաշվի առնելով ՀՀ Պետ. եկամուտների կոմիտեի, Արդարադատության նախարարության և Ֆինանսների նախարարության դիտողությունները և առաջարկությունները Ձեզ եմ ներկայացնում ծրագրի նոր լրամշակված տարբերակը:

*Հարգանքներով՝*

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝* Բ. Ջամբազյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք թիվ 094/30906
14 10 2011թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր-Խարբերդում բնակելի սենյակի և ծածկի կառուցում» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում բյուջեն անհրաժեշտ է ներկայացնել ըստ տարեկան կտրվածքի: | Հիմնադրամը 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N Բ/Ջ-79 գրությամբ ներկայացրել է լրամշակված տարբերակը: |

15/10

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ** | |
| «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում» ծրագրի 1-ին և 7-րդ կետերի միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 1-ին կետի համաձայն ծրագրի նպատակն է ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների և սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգումն ու կառուցումը, մինչդեռ ծրագրի 7-րդ կետի համաձայն բարեգործության ստացող են հանդիսանում միայն սոցիալապես անապահով ընտանիքները: Ծրագրի 7-րդ և 9-րդ կետերի միջև ևս առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 7-րդ կետով ծրագրի իրականացման տևողությունը 2011 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ն է, մինչդեռ ծրագրի 9-րդ կետով աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանված 2011 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>Այս կապակցությամբ առաջարկում ենք լրամշակել և հստակեցնել ներկայացված ծրագրի դրույթները: | Հիմնադրամը 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N Բ/Ջ-79 գրությամբ ներկայացրել է լրամշակված տարբերակը: |

15/10

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների ու սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ հայտնում եմ.<br>1. Քանի որ կից ներկայացված ծրագրի նպատակներն առնչվում են մի քանի ոլորտների (կրթական, առողջապահական, սոցիալական)՝ անհրաժեշտ եմ համարում ծրագրի 7-րդ կետում հստակեցնել շահառու հանդիսացող կազմակերպությունները և անապահով ընտանիքները:<br>2. Կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը սպառիչ չեն ներկայացված և հնարավոր չէ պատկերացում կազմել ծրագրի բյուջեի ծախսման վերաբերյալ: Ուստի անհրաժեշտ եմ համարում նշված կետերը ներկայացնել ծրագրով նախատեսված բյուջեի ամբողջ գումարի չափով՝ մանրամասն նշելով նախատեսվող ծրագրային միջոցառումները, դրանց ժամկետները և արժեքները, | Հիմնադրամը 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N Բ/Ջ-79 գրությամբ ներկայացրել է լրամշակված տարբերակը:<br>15/10 |
| ինչպես նաև ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքները և ծառայությունները, դրանց ծավալները և գինը:<br>Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում լրամշակել ներկայացված ծրագիրը: Ծրագրի բարեգործական որակման հարցը կարող է քննարկվել վերը նշված հարցերի հստակեցումից հետո: | |

15/10

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**—— ———— 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 3-ի N 3/3.8-2/85321-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 4-ի N ԱԱ/3-6/7021-11, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 3-ի N 01/4848-11, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի N 101/104.3/5408-11 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N 01/15/4459-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 05514397) կողմից իրականացվող՝ 2463.3 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով՝ Ավստրիայից ստացված բեռը՝ (4685 կգ ընդհանուր քաշով, 2463.3 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5250 եվրոյին համարժեք դրամ, «Շիրակի» Տ/Մ) ներմուծվում է սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հայկական Կարիտաս ԲՀ կազմակերպության
Գործադիր տնօրեն՝ Անահիտ Մխոյանի կողմից
«17» օգոստոսի, 2011թ.

**Ավստրիական Կարիտասի Կողմից Տրամադրված Մարդասիրական Օգնության Բաշխում**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում «Հայկական Կարիտաս»-ի կողմից իրականացվող ծրագրերի և այլ կազմակերպությունների կարիքավոր շահառուներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ավստրիական Կարիտաս բարեգործական կազմակերպություն<br>Caritas Feldkirch<br>Wichnergasse 22, 6800<br>Feldkirch, Austria |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարիտաս ԲՀԿ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզեր<br>բնագավառը՝ բարեգործական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2463,30 եվրո |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում իրականացվող ծրագրերի և այլ կազմակերպությունների մոտ 360 շահառուներ (ցանկը մանրամասնությամբ կցվում է): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 ամիս, 15.09.2011-15.12.2011 |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Բեռը նախատեսված է բաժանել «Հայկական Կարիտաս»-ի «Առաջնային առողջության պահպանման կենտրոն», «Արեգակ» կենտրոն, «Փոքրիկ իշխան» կենտրոն, հագուստը ու հիգիենիկ պարագաները անհատականորեն կբաշխվեն Գյումրու, Վանաձորի և Գավառի այն ծերերին, ովքեր ներգրավված են «Տնային Խնամք միայնակ ծերերին» ծրագրում: Բաշխման մանրամասն ցուցակը կցված է: Բաշխումը նախատեսված է իրականացնել 2011թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում: Բաշխման աշխատանքների իրականացման համար ծրագրի ղեկավարի կողմից կկազմվի համապատասխան խումբ՝ բաղկացած ծրագրի սոցիալական աշխատողներից և ծրագրի ղեկավարից: Յուրաքանչյուր ծրագրի/կենտրոնի ղեկավար կստանձնի պատասխանատվություն ապրանքի բաշխման/տեղակայման, մանրամասն անվանական և քաշային հաշվետվությունների տրամադրման համար բաշխման գործընթացից հետո 10 օրվա ժամանակահատվածում: «Հայկական Կարիտաս»-ը ամբողջական հաշվետվություն կներկայացնի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Բժշկական տեխնիկա և պարագաներ, անվասայլակներ, անվաքայլակներ և կռնքանիստներ, հագուստեղեն և հիգիենիկ պարագաներ:<br><br>Արժեքը՝ 2463,30 եվրո |

| N | միավոր | Նկարագրություն | Ընդհանուր քաշը կգ | Միավորի գինը եվրոյով | Ընդհանուր գինը եվրոյով | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 109 | Օգտագործված հագուստ | 3038 | 0,2 | 607,6 | օգտագործված, ախտահանված |
| 2 | 12 | հիվանդանոցային մահճակալներ, հարմարեցվող ներքնակներ | 600 | 20 | 240 | օգտագործված |
| 3 | 19 | Անվասայլակներ | 114 | 5 | 95 | օգտագործված |
| 4 | 85 | Կռնքանիստներ | 595 | 5 | 425 | օգտագործված |
| 5 | 11 | Անվաքայլակներ | 55 | 5 | 55 | օգտագործված |
| 6 | 2 | Անգլերեն և Գերմաներեն դասագրքեր | 57 | 0,1 | 5,7 | օգտագործված |

15/11



| N | միավոր | Նկարագրություն | Ընդհանուր քաշը կգ | Միավորի գինը եվրոյով | Ընդհանուր գինը եվրոյով | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | 1 | 1 Քորոմետր-Կարդիոտոգրաֆ, 2 էմբրիոնային ցուցաթերթիկ,300 ներարկիչներ/1 Մուլտիդոպլեր մկանային հետազոտության համար /ուլտրաձայնային/ | 94 | 250 | 250 | օգտագործված |
| 8 | 10 | Ներարկիչներ | 68 | 28 | 280 | նոր |
| 9 | 4 | Ապակյա եզրակներ | 49 | 10 | 490 | օգտագործված |
| 10 | 3 | տակդիրներ/պաշտպանիչ սավաններ | 15 | 5 | 15 | նոր |
| | 256 | Ընդհանուր: | 4685 | | 2463,30 | |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Շիրակի մարզի առողջապահության բաժին |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական խորհուրդը և ավարտից հետո մանրամասն հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

15/11

## Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բեռի բաշխման ցանկ

| # | Նկարագրությունը | Օգտագործված հագուստ | Յիվանդանոցային մահճակալներ | Անվասայլակներ | Կոնքանիստներ | Անվաքայլակներ | Գրքեր | Քոմպյուտեր-Կարդիոտոգրաֆ, մուլտիդոպլեր | Ներարկիչներ | ապակյա եզրակներ | տակդիրներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քրուտ քաշը/կգ | 3038.0 | 600.0 | 114.0 | 595.0 | 55.0 | 57.0 | 94.0 | 68.0 | 49.0 | 15.0 | 4685 |
| | Ինվոյսային արժեքը | 608 | 240 | 95 | 425 | 55 | 5.70 | 250 | 280 | 490.00 | 15 | 2463 |
| | | | | | | | | | | | | |
| 1 | Տնային խնամք/Գյումրի | 1500 | | | | | | | | | 15 | 1515 |
| 2 | Տնային խնամք/Վանաձոր | 900 | | | | | | | | | | 900 |
| 3 | Տնային խնամք/Գավառ | 638 | | | | | | | | | | 638 |
| 4 | Սոցիալական Կենտրոն/Գյումրի | | | | | | 57.0 | | | | | 57 |
| 5 | Արեգակ | | | 114.0 | 595.0 | 55.0 | | | | | | 764 |
| 6 | ԱԱՊԿ | | 100.0 | | | | | 94.0 | 68.0 | 49.0 | | 311 |
| 7 | Գյուլբեկյանի անվան հիվանդանոց | | 500.0 | | | | | | | | | 500 |
| | Ընդհանուրը | 3038 | 600.0 | 114.0 | 595 | 55 | 57 | 94 | 68 | 49 | 15 | 4685 |

15/11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

15/11

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

3.10.2011թ № 3/38-2/85321-1

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 30.09.2011թ. N15/15.4/16009-11 գրությամբ ներկայացված «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

N 034/29411-11
3.10.11թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/11

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N ԱԱ/3-6/7021-11
4.10.11թ

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 30-ի համար 15/15.4/16009-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

N 044/29604-11
4.10.11թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

15/11

«3» 10 2011թ.
N: 01/4848-11

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 30.09.2011թ.
թիվ՝ 15/15.4/16009-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

N 116/29515-11
3.10.11թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

15/11

⊠ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ 4-61-92
Fax 2-28-77

թիվ 101/104.3/5408-11
«5» 10 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 30.09.2011թ. թիվ 15/15.4/16009-11գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրին, որն իրականացվելու է 2011թ. ընթացքում ՀՀ Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

N114/29799-11
5.10-11թ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

15/11

ք. Գավառ , Գ. Լուսավորչի փ. 36
Հեռ. /0264/2-10-45, Ֆաքս /0264/2-41-75
Կայք gegharkunik.region.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N 01/15/4439-11
7 10 2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Պ-ՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Ձեր՝2011-09-30 թիվ 15/15.4/16009-11/

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 13-րդ կետի համաձայն, հավանություն է տալիս Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի <<Հայկական Կարիտաս >> բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ <<Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում>> ծրագրի մասին>> որոշման նախագծին:

Հարգանքով՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

Վ. Մնացականյան
0-264-2-38-75

N113/30128-11
7.10.11թ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ – - Ա**

**քաղ. Երևան**

15/12.1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 12–ի N 3/3.8-2/85928-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ԱԱ/3-6/7196-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հնդկաստանի Հանրապետության կառավարության կողմից տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի (41 տեղ, 1465 կգ ընդհանուր քաշով, 3224063 հնդկական ռուփիին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 215152.6 հդկական ռուփի, բեռի ցանկը կցվում է, Ջվարթնոց ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

## Ցանկ

15/12.1

Հնդկաստանի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը համաձայն ATPL 007C/ ապրանքագրի ուղարկված համակարգչային սարքավորումների

| h/h | Սարքավորումների անվանումը | Քանակը /հատ/ |
|---|---|---|
| 1. | Համակարգիչ (մոնիտորով, մկնիկով, ստեղնաշարով) ACER VERITON M200 Q45 C2D/1.33/8/320/17” | 60 |
| 2. | Դյուրակիր համակարգիչ ACER TRAVELMATE 5742G 484G32MNSS CORE I5 480M/15.6” | 5 |
| 3. | Ձայնագրված CD սկավառակներ՝ ծրագրային ապահովումներով | 199 |

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/12.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.10.11թ. № 3/3.8-2/85928-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.10.2011թ. N15/15.11/16485-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

12.10.11թ.

№ 034/30590-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 15/12.1

11.10.11թ.

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ՀՀԿ/3-6/7196-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 7-ի համար 15/15.11/16485-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

11.10.11թ.

№ 044/30349-11

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

15/12.2

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Շվեյցարիայից «Natalie Stiftung» բարեգործական հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված օրթոպեդիկ պարագաների (300 կգ ընդհանուր քաշով, 1170 շվեյցարական ֆրանկ ընդհանուր արժեքով, Սյունիքի ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

15/12.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.10.11 №3/3.8-2/8591

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.10.2011թ. N15/15.1/16455-11 գրությամբ ներկայացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/30579-11

Կատ. Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

15/12.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

10.10.11 N ՀՊ/22/9291-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.10.2011թ. թիվ 15/15.1/16455-11 գրության կապակցությամբ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հացցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Oct 10 2011 4:58 PM

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող Վ.Գրիգորյան
հեռախոս 52 27 21

020/30319-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 15/12.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԽ/3-6/7180-11
10.10.11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 7-ի համար 15/15.1/16455-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

ՕԱԿ/30229-11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---- ----------------- **2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

15/12.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 3/3.8-2/85735-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 03/07-1/11523-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N ԱԱ/3-6/7108-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռների՝

1) օրգանական միացություններում ծծմբի և ածխածնի միաժամանակյա հայտնաբերման անալիզատոր՝ իր բաղադրամասերով (4 տեղ, 198.3 կգ ընդհանուր քաշով, 50664 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, C 7822, «Զվարթնոց» Մ/Տ).

2) Էկո պոլիմերազային շղթայական ռեակցիայի համակարգ՝ իր բաղադրամասերով (1 տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 17154.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 300 ԱՄՆ-ի դոլար, C 7431, «Զվարթնոց» Մ/Տ).

3) գրքերի թվայնացման համար նախատեսված՝ «Book 2Net Kiosk Production Scanner» տիպի 2 հատ սկաներային համակարգ (2 տեղ, 150 կգ ընդհանուր քաշով, 39940 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, C 8521, «Զվարթնոց» Մ/Տ).

4) ուսումնական, լաբորատոր սարքավորումներ՝ իրենց բաղադրամասերով (4տեղ, 741 կգ ընդհանուր քաշով, 54473.51 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3598.85 եվրո, C 9604, «Զվարթնոց» Մ/Տ).



15/12.3

5) մուֆելային վառարան՝ (1տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 1088 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 77.02 եվրո, C 10054, «Զվարթնոց» Մ/Տ).

6) ուսումնական, լաբորատոր սարքավորումներ՝ իրենց բաղադրամասերով (1 տեղ, 35 կգ ընդհանուր քաշով, 3906 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, C 11166, «Զվարթնոց» Մ/Տ).

7) ուսումնական, լաբորատոր սարքավորումներ՝ իրենց բաղադրամասերով (5 տեղ, 146.5 կգ ընդհանուր քաշով, 843400 ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, C 11012, «Զվարթնոց» Մ/Տ).

8) դոզիմետր-ռադիոմետր «MKS AT1125» իր բաղադրամասերով (2 տեղ, 32.5 կգ. ընդհանուր քաշով, 4240 եվրոյի համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, C8885, «ՄՓ և ՍԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծման ծրագրերը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

15/12.3


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


10.10.11թ №3/3.8-2/85735-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.10.2011թ. N15/15.4/16306-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

N034/30238-11
10.10-11թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**
**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ**
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

**REPUBLIC OF ARMENIA**
**MINISTRY OF EDUCATION AND SCIENCE**
**DEPUTY MINISTER**

15/12.3


0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am


N 03/07-1/11523-11 10.10 2011

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հոկտեմբերի 5-ի № 15/15.4/16306-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

N031/30332-11
10.10.11թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 15/12.3

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N ՀՀ/3-6/7108-11
6.10.11թ.

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 5-ի համար 15/15.4/16306-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

N 04/29943-11
6.10.11թ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ -            -Ա**
**քաղ. Երևան**

15/12.4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84589-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N ՀՔ/22/8481-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/6652-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի (27 տեղ, 86 կգ ընդհանուր քաշով, 483471.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1102.71 ԱՄՆ-ի դոլար, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

14/4.2 15/12.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.09.2011թ. № 3/3.8-2/84589-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. N15/15.6/15192-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N2) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/27895-11
15.09.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

15/12.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

14/4.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.09.11թ. N ՀՊ/22/8481-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.09.2011թ. թիվ 15/15.6/15192-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (2)» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող Ա.Մկրտչյան*
*հեռախոս 52 27 21*

17.09.11թ.

№ 020/28069-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 14/4.2 15/12.4

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

19. 09. 11թ.
№ ՀՀԻ/3-6/6652-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 14-ի համար 15/15.6/15192-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 2)**» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

20. 09. 11թ.
№ 044/28268-11

---

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ-     -Ա**
**քաղ. Երևան**

15/12.5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**

Ձեր 30.09.2011թ. N15/15.6/15960-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ) (1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս.Այվազյան, հեռ. 595-227

3.10.11թ.
№ 034/29395-11

15/12.10

ինվոյս N 024567 24.09.2011թ.

## Բեռի բաշխման ցանկ

| N N | Ապրանքի անվանումը | Տեղերի քանակը | Քանակը | Քաշը նետտո /կգ/ | Քաշը բրուտտո /կգ/ | Արժեքը ֆրանկ | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ փաթեթների / դրամ / |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Գետիկ | 62 | 187,943 |
| | | | | | | | | Այգուտ | 168 | 509,264 |
| | | | | | | | | Սարուխան | 71 | 215,225 |
| 1 | Տոմատի մածուկ | արկղ | 567 | | 6191.64 | | | Դպրաբակ | 83 | 251,601 |
| | | | | | | | | Վահան | 190 | 575,954 |
| 2 | Շաքարավազ | արկղ | 255 | | 12767.85 | | Գեղարքունիքի մարզ 802 փաթեթ | Կալավան | 23 | 69,721 |
| | | | | | | | | Բարեպատ | 6 | 18,188 |
| | | | | | | | | Ջորավանք | 31 | 93,971 |
| | | | | | | | | Մեծաքենդ | 22 | 66,689 |
| | | | | | | | | Գավառ | 64 | 194,006 |
| | | | | | | | | Թթուջուր | 80 | 242,507 |
| | | | | | | | Արմավիրի մարզ 50 փաթեթ | Արտաշար | 49 | 148,535 |
| | | | | | | | | Վերի | 17 | 51,533 |
| | | | | | | | Արարատի մարզ 90 փաթեթ | Արտաշատ | 17 | 51,533 |
| | | | | | | | | Գետազատ | 27 | 81,846 |
| | | | | | | | | Մրգանուշ | 15 | 45,470 |
| | | | | | | | | Չարենցավան | 14 | 42,439 |
| | | | | | | | Կոտայքի մարզ 116 փաթեթ | Սևաբերդ | 41 | 124,285 |
| | | | | | | | | Ջրառատ | 19 | 57,595 |
| | | | | | | | | Արզական | 38 | 115,191 |
| | | | | | | | Լոռու մարզ 51 փաթեթ | Վանաձոր | 48 | 145,504 |
| | | | | | | | Տավուշի մարզ 36 փաթեթ | Դիլիջան | 9 | 27,282 |
| | | | | | | | | Իջևան | 19 | 57,595 |
| | | | | | | | Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար | 2961 | | 8,975,786 |
| | Ընդամենը | | | | 18959.5 կգ | 2800 ԱՄՆ դոլար ձ/ծ ( 33119.68 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է) | | 4074 | | 12,349,663 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝ Հ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

15/12.10

« 4 » 10 2011 թ. N ՖԿ/ՄՆՀ-5/7999-11

Ձեր 2011-09-30, 15/15.6/15960-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N1) («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝ Ֆ. Բերիկյան**

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am**

4.10.11 թ.
№ 040/29623-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

15/12.10

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

30.09.11 թ.
№ ՀՀԻ/3-6/6940-11

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 30-ի համար 15/15.6/15960-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» (N1) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

3.10.11 թ.
№ 044/29438-11

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** 15/12.11

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N Մ-249-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 3/3.8-2/85792-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N ՖԲ/ԱնՄ-5/8144-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N ԱԱ/3-6/7122-11, Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի հոկտեմբերի N, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 01/10.1/3171-11, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 101/104.3/5438-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 01/4885-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N Կ-13/10 գրությունը,* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն -2» ծրագրի մասին» N Մ-249-Ա որոշման (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա, 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա և 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-303-Ա որոշումների խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «63630000 դրամ» բառերը փոխարինել «321430000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետի երկրորդ և 10-րդ կետի երրորդ պարբերություններում «45.0 մլն դրամ» բառերը փոխարինել «295.0 մլն դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 12-րդ կետում «63.63 մլն դրամ» բառերը փոխարինել «321.43 մլն դրամ» բառերով:

15/12.11

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված չոր ապուրների (28 տեղ, 19459 կգ ընդհանուր քաշով, 100000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9012 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի մարզպետարաններ:

FCIU9316047 բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ

28տեղ,19459կգ,100000 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը 9012 ԱՄՆ-ի դոլար

15/12.11

| Ապրանքի անվանումը | Ընդհ. քաշը /կգ/ | Մաքուր քաշը /կգ/ | Արժեքը $ | Շահառուները |
|---|---|---|---|---|
| | | | | Մ-249-Ա 28 ապրիլի 2006թ. |
| Չոր ապուր | 700 | 620 | 3596 | ՀՀ հաշմանդամների միություն ՀԿ |
| | 175,0 | 155 | 899 | Գյումրու թ.12 «Արևիկ» նախակրթարան |
| | 1050 | 930 | 5394 | Արագածոտնի մարզի Լուսագյուղի համայնք |
| | 700 | 620 | 3596 | ՀԱԵ Գուգարաց թեմ |
| | 700 | 620 | 3596 | ՀԱԵ Տավուշի թեմ |
| | 700 | 620 | 3596 | ՀԱԵ Շիրակի թեմ |
| | 1050 | 930 | 5394 | Շիրակի մարզի ավետ.-մկրտական եկեղեցի |
| | 559 | 510 | 2958 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. 48 ընտանիքներ |
| | 350 | 310 | 1798 | Երևան քաղաքի Աջափնյակ վարչ. շրջան |
| | 175 | 155 | 899 | Վանաձորի թ. 5 մանկապարտեզ |
| | 175 | 155 | 899 | Վանաձորի թ. 30 մանկապարտեզ |
| | 7000 | 6200 | 35960 | «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ |
| | 1750 | 1550 | 8990 | Արցախի ազատամարտիկների միություն |
| | 700 | 620 | 3596 | Մ-042-Ա 18 փետրվարի 2011թ.<br>Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ ԲՀ |
| | 1050 | 930 | 5394 | Մ-043-Ա 18 փետրվարի 2011թ.<br>Գյումրու «ԱՌԴԱ» նախակրթարան |
| | 2100 | 1860 | 10738 | Մ-177-Ա 19 մարտի 2010թ.<br>Գյումրու թ. 6 նախակրթարան |
| | 175 | 155 | 899 | Մ-045-Ա 18 Փետրվարի 2011թ.<br>Գյումրու թ. 10 նախակրթարան |
| | 175 | 155 | 899 | Մ-046-Ա 18 Փետրվարի 2011թ<br>Գյումրու թ. 23 նախակրթարան |
| | 175 | 155 | 899 | Մ-044-Ա 18 Փետրվարի 2011թ<br>Գյումրու «Անի Պարտեզ» նախակրթարան |
| Ընդամենը | 19459 | 17250 | 100000 | |

Տրանսպորտային ծախսեր 9012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/12.11

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

11.10.11թ. № 3/3.8-2/85792-1

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.09.2011թ. N15/15.6/16308-11 գրությամբ ներկայացված «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- անհրաժեշտ է պարզաբանել կից ներկայացված բեռի բաշխման ցանկում ընդգրկված շահառուներին բեռների հատկացման նպատակը և հետագա օգտագործման կարգը, քանի որ բեռների բաշխման ցանկում նշված շահառուների մեծ մասն արդեն իսկ ընդգրկված է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի մի շարք որոշումներով հաստատված ծրագրերում, որոնցում հստակ առանձնացված է սննդամթերքի ներմուծումը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

11.10.11թ.

№ 034/30362-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

15/12.11

« 10 » հոկտեմբեր 2011 թ. N ՖԲ/ՀՀՀՄ-5/8144-11

Ձեր 2011-10-05, 15/15.6/16308-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝ Ֆ. Բերիկյան**

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

10.10.11թ.
№ 040/30306-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 15/12.11

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

6.10.11թ.
№ ՀՀՀ/3-6/7122-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 5-ի համար 15/15.6/16308-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

6.10.11թ.
№ 044/29991-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

15/12.11

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

6.10.11թ. N 01/10.1/3171-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր- Սիմոնյանին

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ձեր 05.10.2011թ. թիվ 15/15.6/16308-11 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրը առաջարկում ենք որակել բարեգործական:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

Կատարող՝ Վ.Գևորգյան
Հեռ՝ /0232/ 3-32-50

6.10.11թ.
№ 110/29926-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**

15/12.11

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
☎ 4-61-92
Fax 2-28-77

թիվ 101/104.3/5438-11
«6» հոկտեմբեր 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 05.10.2011թ. թիվ 15/15.6/16308-11 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

6.10.11թ.
№ 114/29881-11

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

15/12.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2007 թվականի N Ս - 902 - Ա
քաղ. Երևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N Ս-249-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2007 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/8-08/1-361, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2007 թվականի դեկտեմբերի 4-ի N 12686/2-1 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2007 թվականի դեկտեմբերի 5-ի N 7240/2-1 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն - 2» ծրագրի մասին» N Ս-249-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) որոշման 1-ին կետում «63630000 դրամ» բառերը փոխարինել «71430000 դրամ» բառերով.

բ) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի երկրորդ պարբերությունում «45,0 մլն դրամ» բառերը փոխարինել «52,8 մլն դրամ» բառերով.

գ) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը «հիգ. պարագաներ» բառերից հետո լրացնել «միկրոավտոբուս» բառով, «45,0 մլն դրամ» բառերը փոխարինել «52,8 մլն դրամ» բառերով, իսկ «15,0 մլն դրամ» բառերը՝ «17,6 մլն դրամ» բառերով.

դ) «63,63 մլն դրամ» բառերը փոխարինել «71,43 մլն դրամ» բառերով.

ե) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31.12.2008թ. ժամանակահատվածում» բառերը փոխարինել «31.12.2011թ. ժամանակահատվածում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 մայիսի 2011 թվականի N Մ-303-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N Մ-249-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 12-ի N 3/3.8-2/78751-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի ապրիլի 21-ի N ՖԲ/ԱնՄ-5/3291-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի 26-ի N ԱԱ/3-6/2480-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն - 2» ծրագրի մասին» N Մ-249-Ա որոշման (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «63630000 դրամ» բառերը փոխարինել «271430000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետի երկրորդ և 10-րդ կետի երրորդ պարբերություններում «45.0 մլն դրամ» բառերը փոխարինել «245.0 մլն դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 12-րդ կետում «63.63 մլն դրամ» բառերը փոխարինել «271.43 մլն դրամ» բառերով:



2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ստացված բեռը (233 տեղ, 4812 կգ ընդհանուր քաշով, 91827 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7475 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն - 2» ծրագրի մասին» N Մ-249-Ա որոշմամբ (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) և 2010 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձեյթուն» ուսումնական և աջակցման կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-182-Ա որոշմամբ հաստատված ծրագրերի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ
**ARMENIAN RELIEF & DEVELOPMENT ASSOCIATION**
Հայ օգնության և զարգացման ընկերակցություն
**ARDA Charitable Found**

9 Paruyr Sevak Street, Yerevan, Armenia
Phone, 209-422 Fax: 209-423
Կ - 13/10

15/12.11
13 հոկտեմբերի 2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
պրն Ա.Ջանջուղազյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 3/3.8-2/85883-11և 3/3.8-2/85792-11 նամակներում արված դիտողությունները Ձեզ եմ ներկայացնում բեռնարկղերի բեռի բաշխման ցուցակները՝ ըստ առանձին ծրագրերի:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Ս-249-Ա որոշմամբ բարեգործական որակված «Բարեկեցիկ մանկություն և ծերություն - 2» ծրագրի /2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Ս-902-Ա, 2010 թվականի օգոստոսի 20-ի N Ս-570-Ա և 2011 թվականի մայիսի 13-ի N Ս-303-Ա որոշումների խմբագրությամբ/ բյուջեն լրացել է, խնդրում եմ ծրագրի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «245.0 մլն դրամ» բառերը փոխարինել «295.0 մլն դրամ» բառերով.

2) ծրագրի 12-րդ կետում «271.43 մլն դրամ» բառերը փոխարինել «321.43 մլն դրամ» բառերով:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքներով՝

Հրահատ Ստեփանյան
Գործադիր տնօրեն

« ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Մուտքի 094/30745
13 10 2011թ.

2033

15/12.11

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Ս-249-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| ՀՀ ԿԲԾՀՀ-ի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.<br>- անհրաժեշտ է պարզաբանել կից ներկայացված բեռի բաշխման ցանկում ընդգրկված շահառուներին բեռների հատկացման նպատակը և հետագա օգտագործման կարգը, քանի որ բեռների բաշխման ցանկում նշված շահառուների մեծ մասն արդեն իսկ ընդգրկված է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի մի շարք որոշումներով հաստատված ծրագրերում, որոնցում հստակ առանձնացված է սննդամթերքի ներմուծումը: | Կազմակերպությունը 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N Կ-13/10 գրությամբ ներկայացրել է առաջարկ: Որոշման նախագիծը խմբագրվել է կազմակերպության առաջարկի համաձայն: |

15/12.11

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

15/12.12

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**<u>(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)</u>**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 5-ի N3/3.8-2/85610-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N ԱԱ/3-6/7281-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ապրանքները (8 տեղ, 4560 կգ ընդհանուր քաշով, 14400.85 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4650 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## *Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ*

Փոխադրման ամփոփագիր N 2011/33/40171 առ 27,09,2011թ. 15/12.12

| N | Ապրանքի անվանումը | Բրուտո քաշը կգ | Նետտո քաշը կգ | Լրացուցիչ միավոր | Տեղերի քանակ | Ծագման երկիր |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նախաներկ՝ սինթետիկ | 3800 | 3200 | 3200 կգ | 6 | ԱՄՆ |
| 2 | Ձեռքի գործիք՝ մետաղական բռնակով, ռետինե գլխիկով - 3 հատ | 44 | 40 | 40 կգ | | ԱՄՆ |
| 3 | Ակրիլային հիմքով ջրադիսպերսիոն ներկեր | 480 | 430 | 431 կգ | 1 | ԱՄՆ |
| 4 | Պոլիմերային խողովակներ | 25 | 20 | 20 կգ | | ԱՄՆ |
| 5 | Ցանցեր՝ մեծ թենիսի դաշտերի համար՝ իր կանգնակներով և անիվներով | 210 | 195 | 3 հատ | 1 | ԱՄՆ |
| 6 | Չափերիզ՝ անիվներով | 1 | 0,8 | 1 հատ | | ԱՄՆ |
| | ***Ընդհանուր*** | **4560** | **3885,8** | | **8** | |

*«Հայ. Ֆուտբոլի Ֆեդ.» Իր. անձ. միութ.*
*Լիազոր ներկայացուցիչ՝* *Ֆ. Գևորգյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/12.12

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

6.10.11թ. № 3/3.8-2/85610-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.10.2011թ. N15/15.6/16281-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

6.10.11թ.

№ 034/30001-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/12.12

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

13.10.11թ.

№ ԱՀ/3-6/7281-11

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 12-ի համար 15/15.6/16673-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

13.10.11թ.

№ 044/30712-11

15/12.13

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**սեպտեմբերի 2011 թվականի N Մ-  -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի -ի N 3.8-2/-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (210 տեղ, 3538 կգ ընդհանուր քաշով, 72090 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6400 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում, (բեռի ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին և Երևանի քաղաքապետին:

№ 1
15/12.1

210 տեղ, 3538 կգ քաշով, 72090 ԱՄՆ դոլար արժեքով, որից 6400 ԱՄՆ դոլար կազմում է ճանապարհածխսը, բեռի բաշխման ցանկ

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղ 2011

[illegible]

| h/h | Ապրանքի Անվանումը | Քանակը | Քաշը/ Բրուտտո | Արժեքը/ ԱՄՆ դոլար | Շահառուները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հագուստ օգտ. | 180 | 3014 | 58982 | Այս ապրանքատեսակները բաշխվելու են անապահով ընտանիքներին<br>1. ԱՀԱԸ-ի Երևանի սոցիալական բաժնի միջոցով անապահով ընտանիքներին - մոտ 80 ընտանիք<br>2. ԱՀԱԸ-ի Վանաձորի սոցիալական բաժնի միջոցով անապահով ընտանիքներին - մոտ 70 ընտանիք<br>3. ԱՀԱԸ-ի Գորիսի սոցիալական բաժնի միջոցով անապահով ընտանիքներին -մոտ 50 ընտանիք |
| 2 | Ծածկոցներ օգտ. | 14 | 168 | 2828 | |
| 3 | Բարձ օգտ. | 1 | 12 | 125 | |
| 4 | Գրքեր անգլերեն /ուսումնական/ | 4 | 130 | 700 | ԱՀԱԸ-ի անգլերեն լեզվի դասընթացների խմբակներում օգտագործելու համար |
| 5 | Պայուսակ օգտ | 5 | 120 | 1440.5 | ԱՀԱԸ-ի Երևանի սոցիալական բաժնի միջոցով անապահով ընտանիքներին - մոտ 10 ընտանիք |
| 6 | Խաղեր, խաղալիքներ | 5 | 70 | 1290 | |
| 7 | Կոշիկ | 1 | 24 | 324.5 | |
| | Ընդամենը | 210 | 3538 | 65690 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/12.13

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

27.09.11թ. № 3/3.8-2/85110-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.09.2011թ. N15/15.2/15645-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության նախարարություններին, Երևանի քաղաքապետարանին, Լոռու և Սյունիքի մարզպետարաններին:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/28877-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/12.13

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

28.09.11թ.
ԱԱ/3-6/6809-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահի**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 23-ի համար 15/15.2/15645-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» (<<Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղ>>) (1) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել առավել մանրամասն բաշխման ցանկ, մասնավորապես՝ անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ այն մասին, թե որոշման նախագծում նշված բեռը ԱՀԱԸ հայաստանյան ներկայացուցչության շահառուներից կոնկրետ ում է տրամադրվելու:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

044/28820-11

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ — ARMENIAN MISSIONARY ASSOCIATION
Նիկոլ Դումանի 22 — 22, Nigol Douman St.
Երեւան 0028-Հայաստան — Yerevan 0028-Armenia
Tel. (37410) 26-36-56, 27-28-92 (Local) Tel./Fax (37410) 23-02-76 E-mail: amaa.armenia@amaa.org

15/12.13

ՀԾ – 042/011
07. 10. 2011թվ.

ՀՀ կառավարության Բարեգործական Ծրագրերի
Համակարգման Հանձնաժողովի Նախագահ՝
ՀՀ Կառավարությանն առընթեր

Պատճեն՝ Պետական եկամուտների կոմիտե նախագահ՝
Պրն. Գ. Խաչատրյանին

Հարգելի Պրն. Տեր- Սիմոնյան,

Ի պատասխան ՀՀ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի 26.09.2011 թվականի թիվ ԱԱ/3-4/6809-11, ԱԱ/3-4/6810-11 գրությունների տեղեկացնում ենք Ձեզ, որ միայն բեռների բաշխման գործընթացի ավարտից հետո կարող ենք ներկայացնել անվանական բաշխման ցանկերը՝ շահառուների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ :

Կանխավ շնորհակալություն :

Հարգանքներով,

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մ/ճ-ի Գործերի Կառավարիչ՝
Հարութ Ներսեսյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք թիվ 107/30114
«07» 10 2011թ.



15/12.13

# ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին»(1) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| … որոշման նախագծի 2-րդ կետում ավելացնել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Երևանի քաղաքապետին, ՀՀ Լոռու և Շիրակի մարզպետներին: | Դիտողությունն հաշվի է առնված: |
| **ՀՀ ՊԵԿ-ի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| … ներկայացնել բեռի բաշխման ցանկը ըստ կոնկրետ շահառուների: | Դիտողությունն հաշվի է առնված, պարզաբանումը կցվում է: |

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

15/12.14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (2)**

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի -ի N 3.8-2/-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (356 տեղ, 3797 կգ ընդհանուր քաշով, 63130 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6025 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում, (բեռի ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետներին:

W2
15/12.1

356 տեղ, 3797 կգ քաշով, 63130 ԱՄՆ դոլար արժեքով, որից 6025 ԱՄՆ դոլար կազմում է ճանապարհածախսը, բեռի բաշխման ցանկ

| Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղ 2011 | | | | | |
|---|---|---|---|---|---|
| [illegible] | | | | | |
| h/h | Ապրանքի Անվանումը | Քանակը | Քաշը/ Բրուտտո | Արժեքը/ ԱՄՆ դոլար | Ծախսումները |
| 1 | Գրքույկ Զ'հաց մեր հանապազորդ | 130 | 472 | 2600 | ԱՅԱԸ-ի Երևանի և ՅՅ տարբեր շրջանների գրասենյակների շահառուների համար |
| 2 | Դաշնամուր փայտե սովորական /Կժ | 1 | 340 | 1000 | ԱՅԱԸ-ի Երևանի երգչախմբի համար |
| 3 | Անեստեզեոլոգիկ սարք /օգտ./ | 1 | 193 | 3000 | Յայ - Ավստրիական բժշկական կենտրոն |
| 4 | Աթոռ /մետաղական ծալովի/ | 22 | 548 | 550 | Յանքավանի "Շողիկ ճամբար" 2012 օգտագործելու համար |
| 5 | Կտորի ռուլոն | 2 | 33 | 300 | ԱՅԱԸ-ի կարի խմբակներում օգտագործելու համար |
| 6 | Ամսագրեր | 1 | 21.3 | 60 | ԱՅԱԸ-ի Երևանի գրասենյակի համար |
| 7 | անհատական արկղեր / հագուստ, տաբատ, բաճկոն, վերնաշապիկ, կիսաշրջազգեստ, պլաստմասե խաղալիք, կտորե պայուսակ/ | 175 | 1845 | 44336 | Յովանավորված ընտանիքների համար - 175 ընտանիք |
| 8 | Ճամբարի պարագաներ | 10 | 161.4 | 969 | Յանքավանի "Շողիկ ճամբար" 2012 օգտագործելու համար |
| 9 | Անվանական արկղեր / կոշիկ, ակնոց, աթոռ, ծածկոց, գլխարկ, հագուստ, գնդակ, պայուսակ | 14 | 183.3 | 4290 | Ավետիսյան դպրոցի համար - 5 արկղ, Բերդի ծերանոցի համար - 4արկղ, Թումանյանի ծերերի բարեգործական ճաշարան - 3 արկղ, Շուշիի Բաղդիկյան դպրոցի համար -2արկղ |
| | Ընդամենը | 356 | 3797 | 57105 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/12.14

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.09.11թ № 3/3.8-2/85163-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.09.2011թ. N15/15.2/15646-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (2) (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարություններին, Երևանի քաղաքապետարանին, Լոռու և Տավուշի մարզպետարաններին, ԼՂՀ-ի կառավարությանը:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/28985-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 15/12.14

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

26.09.11թ ԼԿԿ/3-6/6810-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. սեպտեմբերի 23-ի համար 15/15.2/15645-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» (<<Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղ>>) (2) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել առավել մանրամասն բաշխման ցանկ, մասնավորապես՝ անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ այն մասին, թե որոշման նախագծում նշված բեռը ԱՀԱԸ հայաստանյան ներկայացուցչության շահառուներից կոնկրետ ում է տրամադրվելու, ինչպես նաև անհրաժեշտ է անհատական նշել կից ներկայացված բաշխման ցանկի 7-րդ կետում նշված <<հովանավորված ընտանիքներին>>:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/28819-11

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ — ARMENIAN MISSIONARY ASSOCIATION
Նիկոլ Դումանի 22
Երեւան 0028-Հայաստան
22, Nigol Douman St.
Yerevan 0028-Armenia
Tel. (37410) 26-36-56, 27-28-92 (Local) Tel./Fax (37410) 23-02-76 E-mail: amaa.armenia@amaa.org

15/12.14

ՅԾ – 042/011
07. 10. 2011թվ.

ՅՅ կառավարության Բարեգործական Ծրագրերի
Յամակարգման Յանձնաժողովի Նախագահ՝
ՅՅ Կառավարությանն առընթեր

Պատճեն՝ Պետական եկամուտների կոմիտե նախագահ՝
Պրն. Գ. Խաչատրյանին

Յարգելի Պրն. Տեր- Սիմոնյան,

Ի պատասխան ՅՅ ՅՅ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի 26.09.2011 թվականի թիվ ԱԱ/3-4/6809-11, ԱԱ/3-4/6810-11 գրությունների տեղեկացնում ենք Ձեզ, որ միայն բեռների բաշխման գործընթացի ավարտից հետո կարող ենք ներկայացնել անվանական բաշխման ցանկերը՝ շահառուների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ :

Կանխավ շնորհակալություն :

Յարգանքներով,

Ամերիկայի Յայ Ավետարանչական Ընկերակցության
Յայաստանի մ/ճ-ի Գործերի Կառավարիչ՝
Յարութ Ներսեսյան

107/30114
07. 10. 2011

15/12.14

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին»(2) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| … որոշման նախագծի 2-րդ կետում ավելացնել ԼՂՀ կառավարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ Լոռու և Տավուշի մարզպետներին: | Դիտողությունն հաշվի է առնված: |
| **ՀՀ ՊԵԿ-ի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| … ներկայացնել բեռի բաշխման ցանկը ըստ կոնկրետ շահառուների և նշել կից ներկայացվաց ցանկի ա-րդ կետի «հովանավորված ընտանիքներին»: | Դիտողությունն հաշվի է առնված, պարզաբանումը կցվում է: |

_ՆԱԽԱԳԻԾ_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** 15/12.15

**քաղ. Երևան**

## «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

_Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 3/3.8-2/85883-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N ՖԲ/ԱնՄ-5/8145-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N ԱԱ/3-6/7123-11, Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի հոկտեմբերի N, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 101/104.3/5458-11, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերների 6-ի N 01/4884-11 եզրակացությունները,_ _**որոշում է.**_

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (140 տեղ, 12775.43 կգ ընդհանուր քաշով, 147485 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5595 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա, 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա և 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-303-Ա որոշումների խմբագրությամբ), 2010 թվականի մարտի 19-ի N Մ-177-Ա և N Մ-182-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-042-Ա, N Մ-043-Ա, N Մ-045-Ա, N Մ-047Ա, N Մ-048-Ա, N Մ-049-Ա և N Մ-050-Ա ու 2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի մարզպետարաններ:

TGHU406262-5 բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ

140տեղ,12775,43կգ,147485 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը 5595 ԱՄՆ-ի դոլար

| Ապրանքի անվանումը | Քանակը ըստ չափման միավորի | Ընդհ. քաշը /կգ/ | Մաքուր քաշը /կգ/ | Արժեքը $ | Շահառուները 15/12.15 |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Մ-249-Ա 28 ապրիլի 2006թ. |
| Ծածկոց | 4արկղ | 165,0 | 161 | 769,2 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. 48 ընտանիքներ |
| Անվասայլակ էլեկտրական | 3հատ | 340 | 340 | 10800 | Յայաստանի հաշմանդամների միություն |
| Կոշիկ | 145զույգ | 71 | 61 | 968,7 | կարիքավոր քաղաքացիներ |
| Կանացի հագուստ | 6արկղ | 86 | 74 | 6350 | Երևանի թ. 90 ՆՈՒՅ |
| | 2արկղ | 28 | 25 | 2116 | Երևանի թ. 30 ՆՈՒՅ |
| | 4արկղ | 56 | 50 | 4232 | «Զատիկ» մանկատուն |
| | 6արկղ | 84 | 75 | 6350 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. 48 ընտանիքներ |
| | 12արկղ | 168 | 150 | 12698 | Կարիքավոր քաղաքացիներ |
| | 2արկղ | 28 | 25 | 2116 | Պեմզաշենի երաժշտական դպրոց |
| Բրնձով չոր ապուր | 585կգ | 635 | 585 | 2450 | Վանաձորի «ԱՌԴԱ» թաղ. 48 ընտանիքներ |
| | 140կգ | 152 | 140 | 586 | Վանաձորի թ.5 մանկապարտեզ |
| | 140կգ | 152 | 140 | 586 | Վանաձորի թ.30 մանկապարտեզ |
| | 1120կգ | 1216 | 1120 | 4688 | «Առաքելություն Յայաստան» ԲՅԿ |
| Անվասայլակ | 6հատ | 52 | 52 | 450 | Մ-042-Ա 18 փետրվարի 2011թ. |
| Մեծահասակի տակդիր | 32արկղ | 158 | 126 | 2325 | Գյումրու «ԱՌԴԱ» ԱԱԿ ԲՅ |
| Յենակ | 7հատ | 37 | 37 | 355 | |
| Կանացի հագուստ | 10արկղ | 142 | 124 | 10580 | |
| Բժշկ. լոգանքի նստոցներ | 3հատ | 11,43 | 11,43 | 250 | |
| Բժշկ. աթոռներ | 2հատ | 11 | 11 | 120 | |
| Ծնկակալներ | 1հատ | 8 | 7 | 250 | |
| Բրնձով չոր ապուր | 140կգ | 152 | 140 | 586 | |
| Ծածկոց | 4արկղ | 165,0 | 161 | 769,2 | Մ-043-Ա 18 փետրվարի 2011թ. |
| Կոշիկ | 140զույգ | 69 | 58 | 935,3 | Գյումրու «ԱՌԴԱ» նախակրթարան |
| Կանացի հագուստ | 6արկղ | 84 | 75 | 6350 | |
| Բարձ | 4արկղ | 20 | 16 | 645 | |
| Մանկական հագուստ | 3արկղ | 16 | 13 | 1630 | |
| Բրնձով չոր ապուր | 3970կգ | 3701 | 3410 | 14279 | |
| Ծածկոց | 5արկղ | 208 | 203 | 961,6 | Մ-177-Ա 19 մարտի 2010թ. |
| Կոշիկ | 150զույգ | 73 | 63 | 1002 | Գյումրու թ. 6 նախակրթարան |
| Կանացի հագուստ | 10արկղ | 142 | 124 | 10580 | |
| Բրնձով չոր ապուր | 4080կգ | 3820 | 3520 | 14739 | |
| Բրնձով չոր ապուր | 140կգ | 152 | 140 | 586 | Մ-045-Ա 18 Փետրվարի 2011թ.<br>Գյումրու թ. 10 նախակրթարան |
| Կանացի հագուստ | 4արկղ | 57 | 50 | 4232 | Մ-048-Ա 18 Փետրվարի 2011թ.<br>Երևանի թ.101 ՆՈՒՅ |
| Կանացի հագուստ | 4արկղ | 57 | 50 | 4232 | Մ-049-Ա 18 Փետրվարի 2011թ.<br>Երևանի թ.104 ՆՈՒՅ |
| Կանացի հագուստ | 4արկղ | 57 | 50 | 4232 | Մ-047-Ա 18 Փետրվարի 2011թ.<br>Երևանի թ. 99 ՆՈՒՅ |
| Կոշիկ | 150զույգ | 74 | 68 | 1002 | Մ-228-Ա 01 ապրիլի 2011թ. |
| Կանացի հագուստ | 4արկղ | 57 | 50 | 4232 | Երևանի թ.154 ՆՈՒՅ |
| Կոշիկ | 150զույգ | 74 | 68 | 1002 | Մ-050-Ա 18 Փետրվարի 2011թ. |
| Կանացի հագուստ | 6արկղ | 84 | 50 | 6350 | Երևանի թ.156 ՆՈՒՅ |
| Գրասեղան | 2հատ | 113 | 113 | 100 | Մ-182-Ա 19 մարտի 2010թ.<br>«Ձեյթուն» ուսումնական կենտրոն |
| Ընդամենը | | 12775,43 | 11736,43 | 147485 | |

Տրանսպորտային ծախսեր 5595

FOUNDATION 00057812

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/12.15

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

11.10. 11թ. №3/3.8-2/85883-11

Ձեր № ________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.10.2011թ. N15/15.6/16354-11 գրությամբ ներկայացված «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- անհրաժեշտ է պարզաբանել կից ներկայացված բեռի բաշխման ցանկում ընդգրկված շահառուներին բեռների հատկացման նպատակը և դրանց հետագա օգտագործման կարգը, քանի որ բեռների բաշխման ցանկում նշված շահառուների մեծ մասն արդեն իսկ ընդգրկված են «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի մի շարք որոշումներով հաստատված ծրագրերում, որոնցում հստակ առանձնացված են նմանատիպ բեռների ներմուծումը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

11.10.11թ.
№ 034/30470-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

15/12.15

« 10 » հոկտեմբեր 2011 թ. N ՖԲ/ՀԱՀՄ-5/8145-11

Ձեր 2011-10-06, 15/15.6/16354-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին (N1)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝ Ֆ. Բերիկյան**

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.56-34-91

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

10.10.11թ.
№ 040/30305-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 15/12.15

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

6. 10. 11թ.

№ ՀՀ/3-6/7123-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 6-ի համար 15/15.6/16354-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» (N1) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

6. 10. 11թ.

№ 044/29993-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

15/12.15

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ 4-61-92
-28-77

թիվ 101/104.3/5458-11
« 06 » նոյեմբեր 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 06.10.2011թ. թիվ 15/15.6/16354-11 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

15/12.15

«6» 10 2011թ.

N: 01/4884-11

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77


ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 06.10.2011թ.

թիվ՝ 15/15.6/16354-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի <ԱՌԴԱ> բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին N1> որոշման նախագիծը:

Մենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ Ա.ԳԻԺԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

6. 10. 11թ.

№ 116/30004-11

---


ARDA

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ
**ARMENIAN RELIEF & DEVELOPMENT ASSOCIATION**
Հայ օգնության և զարգացման ընկերակցություն
**ARDA Charitable Found**

9 Paruyr Sevak Street, Yerevan, Armenia
Phone, 209-422 Fax: 209-423


Կ - 13/10

15/12.15

13 հոկտեմբերի 2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին
պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
պրն Ա.Ջանջուղազյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N 3/3.8-2/85883-11և 3/3.8-2/85792-11 նամակներում արված դիտողությունները Ձեզ եմ ներկայացնում բեռնարկղերի բեռի բաշխման ցուցակները՝ ըստ առանձին ծրագրերի:

